ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) *“Արդյունավետ աշխատանք Հայաստանում երիտասարդների համար. երիտասարդ ձեռներեցներին աջակցություն” ծրագրի* շրջանակներում հրավիրում են բոլոր *ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ (18-35 տարեկան),* ովքեր ցանկանում են հիմնել իրենց սեփական բիզնեսը կամ վերջին երեք տարիներին արդեն զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, մասնակցել “Հաջողսկիզբ” ծրագրին:

Ծրագիրը ներառում է ուսուցողական, տեղեկատվական, մասնագիտական խորհրդատվության և ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ:

Մասնակցելով ծրագրին սկսնակ գործարարները ստանում են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ:

Ծրագրի տևողությունը մեկ ամիս է, որի ընթացքում փորձառու մասնագետների ուղղորդմամբ սկսնակ գործարարները նախ մշակում են իրենց անհատական գործարար ծրագիրը, որից հետո ձեռնամուխ են լինում դրա իրականացմանը:

Ծրագրի շրջանակներում մասնակիցները հնարավորություն կունենան օգտվելու ՓՄՁԶԱԿ-ի սկսնակների ֆինանսական աջակցության գործիքներից:
Լավագույն գնահատականի արժանացած կենսունակ գործարար ծրագրերը սկսնակի ցանկությամբ կարող են ներկայացվել վարկավորման հետևյալ պայմաններով՝

- առավելագույնը 5 մլն դրամ,
- տարեկան տոկոսադրույքը՝ 10%,
- մինչև 5 տարի մարման ժամկետով,
- Հայաստանի ՓՄՁԶԱԿ-ի կողմից տրամադրվող երաշխավորություն (100%) – առանց գրավի:

Մանրամասների համար դիմել
ՓՄՁԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղ
հետևյալ հեռախոսահամարներով՝0322 21370, 098 311006
Էլ. փոստ՝ Loridnc@yahoo.com